

Մենք ՅՕԲԵԼԵԱՆԸ

Երեկուանից արդէն բացուել և սկսուել է Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի կարգադրութեամբ, ամեն տեղ, հայութեան բոլոր շրջաններում, 1500-ամեայ տառերի դիւտի և 400-ամեայ հայ տպագրութեան համազգային բաղադրակրթական մեծ տօնը—յօբելեանը, եկեղեցական և դպրոցական հանգէաներով:

Խորհրդաւոր կարգադրութեամբ յօբելեանական տարի է նշանակուած 1912 թուի հոկտ. 13-ից մինչև 1913 թուի հոկտ. 12-ը, ուրեմն մի ամբողջ տարի, որի ընթացքում պէտք է կազմակերպուին դպրոցներում և ազգային հաստատութիւնների մէջ երեկոյթներ, ցերեկոյթներ, համերգներ, դասախօսութիւններ ժողովրդի և աշակերտութեան համար, այլև պէտք է կատարուեն ճանապարհորդութիւններ դէպի Օշական, ուր գտնուում է սուրբ Մեսրոպի գերեզմանը:

Սա մի խելացի, հեռատես և նպատակաշարմար կարգադրութիւն է, որով արդէն ամեն մի առարկութիւն, պատճառաբանութիւն և տըրտունջ չբանում են մէջտեղից, և միութեան ու համերաշխ գործելու ուղին հաթուած է:

Մի տարին բաւական միջոց է մտածելու, ժողովներ անելու, յօբելեանական մասնաժողովներ կազմելու և ծրագիրներ մշակելու համար, թէ ինչպէս կարելի կլինի յաւերժացնել այդ ազգային պատմական մեծ տօնը մի բարենպատակ ձեռնարկութեամբ:

Յօբելեանական տարուայ ընթացքում հայութեան բոլոր շրջաններում տեղի է ունենալու ժողովարարութիւն և դրամական նուիրատուութիւններ ս. Սինօզի միջոցով յօգուտ դպրոցական ֆօնդի, որի համար թոյլտուութիւնն արդէն ստացուած է Գովհասի Փոխարքայից մի տարի ժամանակով:

Յօբելեանական տարին փակուելու է 1913 թ. հոկտ. 12-ին ս. Թարգմանչաց տօնին ս. Էջմիածնում ազգային հաստատութիւնների ներկայացուցիչների մասնակցութեամբ:

Ողջուներով յօբելեանական տօնի բացումը՝ մենք ի սրտէ ցանկանում ենք յաջողութիւն և հրաւիր ենք կարողւմ ամբողջ հայութեան՝ առանց

դաւանանքի խտրութեան. մասնակցել այդ համազգային բաղադրակրթական մեծ տօնակատարութեանը հաճութեամբ և նուիրաբերութեամբ:

ԵՐԿՈՒ ՏԱՐՐԵՐ ՏՐՏՈՒՆՁՆԵՐ

V

Թիւրքահայերի դատը արդար դատ է և արդար գործը պէտք է անարատ ձեռքբերուկատարել: Ի՞նչ հարկ կայ դիմել ստի, կեղծիքի, կռանչոցների, երբ պարզ ու անպաճոյճ բացատրութիւնը աւելի համոզեցուցիչ է թիւրքահայերի դատի համար:

Ի՞նչ է թիւրքահայերի դատի պաշտպանութիւնը մնար իրեն՝ տառապող ժողովրդին, նա անպաճոյճ բացատրութիւններով կը համոզէր՝ որով պէտք է: Բայց այդ դատը իր ձեռքն է առնելու հայ մտաւորական և ինտելիգենտ դասակարգը և գործել է ու շարունակում է գործել դիւանագիտօրէն, պոլիտիկայով,—այսինքն ինչքին զօռ տալով, ըստ ժողովրդական բացատրութեան:

Ազգին առաջնորդող դասակարգը միամտաբար կարծում է, թէ իր պոլիտիկայով կարող է սրբէ մէկին խաբել: Նա կարծում է, թէ մեծագործ բողոքներով, տրտունջներով, լրագրական գայրոյթներով կարող է վախեցնել թիւրքիային և մանաւանդ կարող է խաբել եւրոպական պետութիւններին:

Ի՞նչ միտք ունի կոկորդ պատուելու չափ ազդողակ բարձրացնել, աշխարհի ամեն անկիւն վախատուն տարածել, ամեն օր լրագրների մէջ խոշոր տառերով ու տասնեակ վերնագիրներով ճիշ արձակել թէ՛ Վոտորեցին, քանդեցին, սպանեցին, թալանեցին, հրդեհեցին, սրախոխողութիւն, օգնեցէք, ազատեցէք, ճար ու իլլալ արէք... Եւ այս՝ օրը-օրին, ամեն լրագրում, ամեն տեղ:

Հայ մտաւորական—ինտելիգենտ դասակարգը կարծում է, թէ եւրոպայում պետական մարդիկ աւելի յիմար են, քան թէ իրենք՝ ազգային առաջնորդները, այդ է պատճառը պիւրջիւնների վախատունների: Ազգի առաջնորդները երկար տարիներ ան մոլորութեան մէջին, թէ Բալկանեան քրիստոնեաները զէր